ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՁՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզիԿաթնաջուր համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.Կաթնաջուր, 13 փող. 1, Հեռ. (099) 000302 ,
katnajur.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

ԿԳԵ-273
23 նոյեմբեր 2020թ.

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից Ձեզ եմ ներկայացնում, ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 24-ին կայանալիք նիստի օրակարգը:

11/23/2020

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՊԱՊՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) առցանց հեռարձակումների վերաբերյալ

23.11.2020թ. գ. Կաթնաջուր

N	Համայնք	Միջոցառում	Օրը	Ժամը	Վայրը
1	Կաթնաջուր	Կաթնաջուր համայնքի ավագանու հերթական նիստ	24.11.2020թ.	10:00	Կաթնաջրի համայնքապետարան 13 փողոց 1 շենք

Նախագիծ

ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020Թ-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ
24-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Կաթնաջուր համայնքի ավագանու 2020թ.-ի հոկտեմբերի 10-ի նիստի օրակարգը

Օրակարգ
Կաթնաջուր համայնքի ավագանու 2020թ.-ի հոկտեմբերի 10-ի նիստի

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Կաթնաջուր համայնքի ավագանու 2020թ.-ի նոյեմբերի 24-ի նիստի օրակարգը

Օրակարգ
Կաթնաջուր համայնքի ավագանու 2020թ.-ի նոյեմբերի 24-ի նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքի 2020թ.-ի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

2. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքին տրամադրված օգնության վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդման մասին

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

3. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 2020թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

4. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 13 փողոցի թիվ 17 հասցեով տնամերձ հողամասին կից ճանապարհահատվածի փլուզումը կանխելու նպատակով հենապատի կառուցման աշխատանքները մեկ անձից կատարելուն համաձայնություն տալու մասին

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

5. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

Նախագիծ

ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ 2020Թ.-Ի
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով և 77-րդ հոդվածով.

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել Կաթնաջուր համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքի 2020թ.-ի գույքագրման փաստաթղթերը:

Նախագիծ

ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ
ՄԱՍԻՆ

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշման 14 կետի պահանջները.

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն

- Կանաջուր համայնքի ղեկավարի 2020թ.-ի հոկտեմբերի 26-ի թիվ 32 որոշմամբ Կաթնաջուր համայնքի բնակիչներ Վարուժան Արամայիսի Մանուկյանին և Արսեն Ռաֆիկի Եգորյանին որպես պատերազմում վիրավորում ստացած զինվորների ընտանիքների անդամներ Կաթնաջուր համայնքի 2020թ.-ի բյուջեի 10/07/01/54 դասակարգման 4729 հոդվածից 50000 (հիսուն հազար)-ական
- Կաթնաջուր համայնքի ղեկավարի 2020թ.-ի նոյեմբերի 02-ի թիվ 33 որոշմամբ Կաթնաջուր համայնքի բնակիչ Արման Սենդրիկի Դարբինյանին որպես հարազատին կորցրած անձ Կաթնաջուր համայնքի 2020թ.-ի բյուջեի 10/03/01/55 դասակարգման 4726 հոդվածից 50000 (հիսուն հազար) դրամ և Կաթնաջուր համայնքի բնակչուհի Գայանե Ռոբերտի Սիմոնյանին որպես պատերազմում վիրավորում ստացած զինվորի ընտանիքի անդամ Կաթնաջուր համայնքի 2020թ.-ի բյուջեի 10/07/01/54 դասակարգման 4729 հոդվածից 50000 (հիսուն հազար) դրամներ հատկացնելու վերաբերյալ հաղորդումը:

Նախագիծ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ
ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով և 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

1. Կաթնաջուր համայնքի ավագանու 2019թ.-ի դեկտեմբերի 27-ի թիվ 37-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Նախագիծ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 13 ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 17 ՀԱՍՑԵՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ՓԼՈՒԶՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՆԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

_____

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով,

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

Հաշվի առնելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի <<Արմինիս-11>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 13 փողոցի թիվ 17 տնակի տնամերձ հողամասին կից ճանապարհահատվածի շեպի կայունության վերաբերյալ տրված եզրակացությունը, թույլատրել Կաթնաջրի համայնքապետարանին ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 13 փողոցի թիվ 17 հասցեով տնամերձ հողամասին կից ճանապարհահատվածի փլուզումը կանխելու նպատակով հենապատի կառուցման աշխատանքները կատարելու մեկ անձից:

Նախագիծ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: